ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 57-Ա

Արթիկ համայնք 28 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 235-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի հանգստի և սպորտի ծառայություններ բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերը համաձայնություն տալու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/
5. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:
/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Չարչյան		
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Ռափյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 58-Ն

Արթիկ համայնք 28 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 235-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 235-Ն որոշման մեջ բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Եկամտային մաս

1)«Այլ դոտացիաներ» 1254 տողում գրված «349691600 երեք հարյուր քառասունինը միլիոն վեց հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր» թիվը և բառերը փոխարինել «349903900 երեք հարյուր քառասունինը միլիոն ինը հարյուր երեք հազար ինը հարյուր» թվով և բառերով:

2. Ծախսային մաս

1) Գյուղատնտեսություն բաժնի 04.2.1 դասակարգմամբ «Այլ նպաստներ բյուջեից» (4729) հոդվածում գրված «339506400 երեք հարյուր երեսունինը միլիոն հինգ հարյուր վեց հազար չորս հարյուր» թիվը և բառերը փոխարինել «339718700 երեք հարյուր երեսունինը միլիոն յոթ հարյուր տասնութ հազար յոթ հարյուր» թվով և բառերով:/Արթիկ համայնքում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի մասնակիցներին փոխհատուցում/:

2) Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) բաժնի 06.6.1 դասակարգմամբ «Շենքերի և շինությունների կառուցում» (5112) հոդվածում գրված «96559000 իննսունվեց միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար» թիվը և բառերը փոխարինել «97559000 իննսունյոթ միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար» թվով և բառերով: /Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննություն - 1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ/:

3) Նախադպրոցական կրթություն բաժնի 09.1.1 դասակարգմամբ «Այլ կապիտալ դրամաշնորհներ» (4657) հոդվածում գրված «0 զրո» թիվը և բառը փոխարինել «10800000 տաս միլիոն ութ հարյուր հազար» թվով և բառերով:/ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայրում մանկապարտեզի շենքի կառուցման ծրագրի շրջանակներում համայնքի կողմից համաֆինանսավորում/:

4) Կրթություն (այլ դասերին չպատկանող) բաժնի 09.8.1 դասակարգմամբ «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» (4819) հոդվածում գրված «7480000 յոթ միլիոն չորս հարյուր ութսուն հազար» թիվը և բառերը փոխարինել «7580000 յոթ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար» թվով և բառերով: /«Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախակրթարանի համար գրասենյակային նյութերի գնում -100000/մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ/:

5) Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ բաժնի 11.1.2 դասակարգմամբ «Պահուստային միջոցներ» (4891) հոդվածում գրված «140997800 մեկ հարյուր քառասուն միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր» թիվը և բառերը փոխարինել «129097800 մեկ հարյուր քսանինը միլիոն իննսունյոթ հազար ութ հարյուր» թվով և բառերով:

6) Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից «1000000 մեկ միլիոն» Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել համայնքի ֆոնդային բյուջե:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Չարչյան		
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Ռափյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 59-Ա

Արթիկ համայնք 28 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 235-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» բաժնում նախատեսված գումարից կատարել հատկացում ընդամենը 80000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Պեմզաշենի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դուդուկի խմբի սանին և դասատուին՝ հանրապետական երաժշտական մրցույթ-փառատոնին փայլուն մասնակցության համար:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Չարչյան		
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Ռափյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի
ապրիլի 28-ի թիվ 59-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՊԵՄԶԱՇԵՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴՈՒԴՈՒԿԻ ԽՄԲԻ 1-ԻՆ ՏԵՂ ՆՎԱՃԱԾ ՍԱՆԻՆ ԵՎ ԴԱՍԱՏՈՒԻՆ

Հ/Հ	**Ազգանուն**	**Անուն**		**Գումարը**
1	Հարությունյան	Մկրտիչ	դասատու	40,000
2	Հովհաննիսյան	Հակոբ	1-ին տեղ	40,000
	Ընդամենը			**80,000**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 60-Ա

Արթիկ համայնք 28 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՍՏԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասին 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով հաստատված կարգի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիայի ստացման նպատակով՝ 2022 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համաֆինանսավորվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հայտերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Չարչյան		
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Ռափյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու
2023 թվականի թիվ 60-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ

1. Արթիկ համայնքի թվով 15 բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում
2.Արթիկ համայնքի թվով 18 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում
3. Արթիկ համայնքի,Արթիկ թվով 11 բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնման
4.Արթիկ համայքնի թվով 6 բնակավայրերում խմելու ջրագծերի հիմնանորոգում
5.Արթիկ համայնքի Սարատակ և Պեմզաշեն բնակավայրերի ճանապարհների ասֆալտապատում
6.Արթիկ համայնքի Վարդաքար և Անուշավան բնակավայրերի ոռոգման համակարգի կառուցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 61-Ա

Արթիկ համայնք 28 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին **մասի 4.1 կետով** և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված տարեկան աշխատանքային պլանների կազմման ուղեցույցը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Չարչյան		
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Ռափյան		
Վարդանյան		
Մկրտչյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 62-Ա

Արթիկ համայնք 28 ապրիլի 2023 թվական

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Հայաստանի Հանրապետության համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Աղրամանյան		
Բաղդասարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Պետրոսյան		
Չարչյան		
Հարությունյան		
Տոնոյան		
Վարդանյան		
Սահակյան		
Մինասյան		
Ռափյան		

Վարդանյան
Մկրտչյան
Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի ապրիլի 28